Անվանաթերթ՝ Սաղմոս Երջանիկ Մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի Հայրապետութեան տեառն Սիմէօնի Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Ի թուականիս մերոյ 1219: Գրքի վերջում եղած հիշատակարանի մեջ «Ի Տպարանի Պետրոսեան Ստեփանոսի»:

Այս գիրքը Ստեփանոս Պետրոսյանի տպարանից դուրս եկած մեզ ծանոթ բոլոր գրքերից ամենաառաջինն է և ըստ երևույթին Պետրոսյանի անդրանիկ տպագրությունը: Այս առիթով հարկ է պարզել մի երկարամյա թյուրիմացություն: Գ. Լևոնյանը Պետրոսյանի տպարանի մասին գրում է. «Ակնեցի Ստ. Պետրոսյանը 1750 թվին հիմնում է մի տպարան և նույն թվին տպագրում «Տետրակ որ կոչի գաւազան կրկնազօր» գիրքը», «Այս գրքի տպագրությունից հետո, մեզ անհասկանալի պատճառներով ամբողջ 21 տարի լռում է Պետրոսյանի տպարանը... Միայն 1771 թվից սկսած Պետրոսյանի տպարանից սկսում են լույս տեսնել հետևյալ գրքերը. «Գործք առաքելոց», «Ժամագիրք հայոց» և «Տետրակ այբուբենականք»[14]: Նույն կարծիքին են եղել նաև Թեոդիկը, Ա. Ղազիկյանը և Գ. Զարբհանալյանը[15]: Այստեղ սխալն այն է, որ վերոհիշյալ «Գաւազան կրկնազօրը» (Սրմաթեշ Մանուել Կեսարացու) տպագրվել է ոչ թե 1750-ին, այլ 1780-ին: Թյուրիմացության պատճառը գրքի անվանաթերթի մի նախադասությունն է. «Շարադրեալ հաւաքմամբ ի թուականի մերոյ ռճղթ» (=1750), որը իրականում գրքի տպագրության տարեթիվը չէ (այլ շարադրման): Տպագրության տարեթիվը գտնվում է գրքի 135-րդ էջում. «Եղև տպումն տետրակիս ի ռմիթ» (=1780): Այս տարեթիվը հաստատվում է (իսկ 1750-ը ժխտվում) նաև անվանաթերթի վրա հիշատակվող կաթողիկոս Սիմոն Երևանցու (գահակալեց՝ 1763—1780), Երուսաղեմի պատրիարք Հովակիմ Քանաքեռցու (1775—1793) և Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա Կաղզվանցու (1773—1781) անուններով, որոնց գահակալության օրոք կատարվել է տպագրությունը: Այսպիսով, Ստ. Պետրոսյանի տպարանը գործել սկսել է ոչ թե 1750-ին, այլ՝ 1770-ին, մեր ձեռքի տակ եղած այս Սաղմոսարանի տպագրությամբ:

Նկ. 5. Ստեփանոս Պետրոսյանի կողմից 1770-ին տպագրված Սաղմոսարանը

---

14 Գ. Լևոնյան, նշվ. աշխատութ., էջ 144:

15 Թեոդիկ, նշվ. աշխատութ., էջ 62, Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն, սյունակ 1175—1176, Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, էջ 127: